Օրինակ նամակի Զինապետութեան,

ԳԼՈՒԽ ԿԶ.

Տեսանելով մեր ընդունելութիւնն յԱշխարհին ուտից թուղթ փոխանորդութեան նոցայ ընդ քեզ և 'ի վերայ երդման քոյ հաստատեցաք 'ի միտս մեր, հաւատարիմ Սեղբեստրոսդ լինիլ տանն հայոց տուաք պաշտօն զինապետութեան քեզ 'ի մէջ քաղաքին անու ժամանակաւ երիս ամաւ, զի Ջանասէր Սեղբեստրոսդ կալով մնասցես պետ զինաց պահութեան, և զոր ինչ զէն երկաթոյ, որ 'ի քաղաքն անի ստանալով քոյ 'ի յառաջ քան զքեզ լեալ զինապահ Ջանասէր մկրտչէ հանդերձ քոյին ժամանակի ստացելօք պահել յստակ անարատ Օծեալ եղով հաստատելով խորտակեալս կապեալ հարկաւոր քարամբ փալասխայիւ բաղնէթաւ չախմախաւ, և տուաք իշխանութիւն քեզ ազդ առնել իշխան քաղաքին անու եթէ զէն թվանգի պակասիցէ թուաւ իբրև վաթսուն հազարաւ և ստանալ 'ի նմանէ պակասնորդն զի լցուցէ պակասնորդն լրիւ վաթսուն հազարաց, թֆանգ վաթսուն հազար, թափանջայ վաթսուն հազար, սուսեր պահելով պատրաստ վասն հարկաւոր ժամանակի, տուաք հրաման քեզ հնազանդիլ և յանձնել զէնս որքան և 'ի ձեռն ում որ հրամայէ քեզ իշխանն անու ստանալ 'ի նմանէ ըռսիտս, և եթէ յետս դարձուցանելով ընկալցես